«ՀրազՋԷԿ» ԲԲԸ Գնահատող հանձնաժողովի նիստի

# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ու Թ Յ Ու Ն N 16/07.09.20

ՀՋ-ԲՄԸ-ՀՀԱԾԳ-12/17.07.20-ԱՄ ծածկագրով Հաշվապահական հաշվառման աութսորսինգային ծառայության բաց մրցույթով գնման ընթացակարգի հայտերի բացում

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ «ՀրազՋԷԿ» ԲԲԸ-ում 07.09.2020թ. ժամը $14^{00}$ –ին:

Նիստին մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝
Ա.Մնացականյան – ԳՏՏ - Գլխավոր ճարտարագետ
Հանձնաժողովի նախագահի տեղակալ՝
Հանձնաժողովի անդամներ՝
Տ.Մարտիրոսյան - գլխավոր ճարտարագետի տեղակալ նորոգման գծով
Ջ.Նաղդալյան - գլխավոր ճարտարագետի տեղակալ շահագործման գծով
Ս.Հակոբյանը - ԿՏԱ-2 պետ
Լ.Մնացականյան - Էլեկտրական արտադրամասի պետ
Գ.Քոչարյան - ԿՎԱ-ի պետ
Հանձնաժողովի քարտուղար՝

Ս.Մարգարյան - տնտեսագիտական վարչության առաջատար ճարտարագետ-տնտեսագետ

Նորոգման, շահագործման վարչության պետ Է.Մովսիսյանը արձակուրդում է:
Նիստին մասնակցում է գնահատող հանձնաժողովի կողմից ներգրաված մասնագետ, «ՀրազՋԷԿ» ԲԲ ընկերության գլխավոր հաշվապահ-ֆինանսական վարչության պետ Ա.Ավետիսյանը:

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. ՀՋ-ԲՄԸ-ՀՀԱԾԳ-12/17.07.20-ԱՄ ծածկագրով Հաշվապահական հաշվառման աութսորսինգային ծառայության բաց մրցույթով գնման ընթացակարգի հայտերի բացում:

Ընդունվել է որոշում. Կողմ՝ 6, դեմ՝ 0:

Ընկերության մասնագետները, շուկայի մարկետինգային ուսումնասիրություն կատարելու նպատակով, դիմել են երեք կազմակերպություններին անհրաժեշտ ծառայությունների համար գնային առաջարկ ներկայացնելու խնդրանքով: Հարցումների արդյունքում ստացվել է մեկ պատասխան «PHP Partners» կազմակերպության կողմից:
Մարկետինգային ուսումնասիրության արդյունքները գնահատելուց հետո հանձնաժողովը սկսեց օրակարգի քննարկումը:

1. Մրցույթի հայտերի ընտրական փուլ

1.1 Տեղեկություններ հայտերի բացման մասին
Հայտը բացվել է ըստ գրանցամատյանի հերթականության, հրապարակված հայտարարությունով սահմանված օրը՝ 2020թ. սեպտեմբերի 07-ին, ժամը $14^{00}$-ին:

1.2 Հայտերը ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և գտնվելու վայրը
ՀՋ-ԲՄԸ-ՀՀԱԾԳ-12/17.07.20-ԱՄ ծածկագրով Հաշվապահական հաշվառման աութսորսինգային ծառայության բաց մրցույթով գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել մեկ կազմակերպություն՝
1. «ՓԻ-ԷՅՋ-ՓԻ-ՓԱՐԹՆԸՐԶ» ՓԲԸ,
հասցեն՝ Աղոնցի 2,Երազ Բիզնես կենտրոն, Երևան, ՀՀ,
հայտը՝ մեկ ծրարով (մտից №17, 07.09.20թ., ժամը 11:05):

Ընդունվել է որոշում. Կողմ՝6, դեմ՝0:

1.3 Տվյալներ բացված հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին
Բացված մրցութային հայտը ձևակերպված է ճշգրիտ: Ներկայացված փաստաթղթերը, մասնակիցների վերաբերյալ տեղեկատվությունները համապատասխանում են մրցութային փաստաթղթերի պահանջներին:

Ընդունվել է որոշում. Կողմ՝6, դեմ՝0:

2. Մրցույթի հայտերի գնահատման փուլ

2.1 Մասնակցի առաջարկած գինը
ՀՋ-ԲՄԸ-ՀՀԱԾԳ-12/17.07.20-ԱՄ ծածկագրով Հաշվապահական հաշվառման աութսորսինգային ծառայության բաց մրցույթով գնման ընթացակարգի մասնակցի գնային առաջարկն է՝
- առաջարկված աշխատանքների վերջնական արժեքը 124 200 000 ՀՀ դրամ է,
- ԱԱՀ-ն՝ 24 840 000ՀՀ դրամ,
- ընդհանուր գումարը՝ 149 040 000 ՀՀ դրամ:
- ամսական հաշվարկով ընդգանուր գումարը՝ 5 520 000 ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

2.2 Մասնակցի որակավորումը
Մասնակիցն ունի վերջին 5 և ավելի տարվա աշխատանքային փորձառություն ՀՀ-ում հաշվապահական հաշվառման վարման, ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և հարկային ու հաշվապահական խորհրդատվության ոլորտներում:

2.3 Մասնակցի հուսալիությունը
Մասնակիցն ունի ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հավատարմագրված 5 աշխատակից, որոնք կարող են ներգրավվել «ՀրազՋԷԿ» ԲԲ ընկերությանը մատուցվող աութսորսինգային ծառայություններում:

Ընդունվել է որոշում. Կողմ՝6, դեմ՝0:

3. Մրցույթի հաղթողի որոշումը
ՀՋ-ԲՄԸ-ՀՀԱԾԳ-12/17.07.20-ԱՄ ծածկագրով Հաշվապահական հաշվառման աութսորսինգային ծառայության գնման ընթացակարգի հաղթող ճանաչել միակ հայտատու «ՓԻ-ԷՅՋ-ՓԻ-ՓԱՐԹՆԸՐԶ» ՓԲԸ–ին, որի հայտը նախընտրելի է ըստ հաստատված գնահատման չափանիշների:

ՀՋ-ԲՄԸ-ՀՀԱԾԳ-12/17.07.20-ԱՄ ծածկագրով Հաշվապահական հաշվառման աութսորսինգային ծառայության գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց.

1. Ծանուցել «ՓԻ-ԷՅՋ-ՓԻ-ՓԱՐԹՆԸՐՋ» ՓԲԸ-ին՝ առաջարկելով կնքել պայմանագիր 149 040 000 (մեկ հարյուր քառասունինը միլիոն քառասուն հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն, ընդհանուր գնով Հաշվապահական հաշվառման աութսորսինգային ծառայության գնման համար (ծածկագիր՝ ՀՋ-ԲՄԸ-ՀՀԱԾԳ-12/17.07.20-ԱՄ):

Ընդունվել է որոշում. Կողմ՝ 6, դեմ՝ 0:

Ա. Մնացականյան

Տ. Մարտիրոսյան

Ջ. Նաղդալյան

Ս. Հակոբյան

Լ.Մնացականյան

Գ. Քոչարյան